86. ԱԴԱՄՈՐԴՈՒ ՀԵՔԻԱԹ

Կէղնի-չէղնի մարդ մե կէղնի, օր կը ծերանա՝ գընկնա մըջ ծանդր մտքին,— ի՛մալ էնե, օր չը մեռնի։

— Ցելնամ էրթամ հմալ էրկիր մե, օր չը մեռնիմ։

Գելնա գընկնա ճամպա. շատ կէրթա, քիչ կէրթա, կը հասնի էրկիր մե։

— Իդա ի՞նչ էրկիր է,— կը հարցու մարդ։

— Իդա Ախշարի վեռջ էրկիրն է։

— Ըստուց դեն էրկիր չկա՞։

— Չկա՛,— կըսին ուրին։

Մարդ կը նստի ծառի մե տակ, կըռհաթի, ուրին-ուրին կը խոսա. «Քանի օր Ախշարի վեռջ էրկիրն է, հմալ է մարդ իդա տեղ չը մեռնի»։

— Կը մեռնի, Ա՛դամորդի,— կըսե աներևութ ձեն մե։

— Ի՞մալ,— կը զայլաքուշտի մարդ։

Ձեն կըսե.

— Կը մեռնի, Ա՛դամորդի, կը մեռնի, քանի օր մահ մարդու մեջն է ուր ծնվելու օրեն ու մկա բերեր իս յոդա, հըտ քըզի։

Մարդ փոռ-փոշման գուզե յետ փախնի, հմա յոտքեր կը թուլնան, աչքեր կը մթնին, գընկնա կը մեռնի, իմալ կը մեռնի յըմեն մարդ։